*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

# *ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ*

# *Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն  Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն  Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք*

*Հետազոտության թեման՝*
Կարդացածը հասկանալու կարողության ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում

*Առարկան՝* մաթեմատիկա

*Հետազոտող ուսուցիչ՝* Բաղալյան Ալինա

*Ուսումնական հաստատություն՝* Արտաշատի 2 հիմ. դպրոց

***Երևան 2022***

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... 3

1. Կարդալու ուսուցման նշանակությունը ..... 5

2.Կարդալու ուսուցման հիմունքները ..... 6

3. Հասկանալով կամ գիտակցորեն կարդալ ..... 7

4.Ճիշտ կամ անսխալ կարդալ ..... 11

5.Սահուն կամ վարժ կարդալ ..... 11

6.Արտահայտիչ կարդալ ..... 13

Եզրակացություն ..... 15

Օգտագործված գրականության ցանկ ..... 16

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** Կարդալու կարողության ձևավորման և զարգացման ուղղությամբ աշխարհում կատարվել և կատարվում են բազմաթիվ հետազոտություններ, մշակվում են ծրագրեր: Հատկապես մեթոդիստներին մտահոգում են մաթեմատիկայի դասավանդման ընթացքում կարդալու կարողության ձեռքբերման գործընթացի դժվարություններն ու առանձնահատկությունները:

Անշուշտ, կարդալու հմտության ձևավորման խնդրի լուծումն առաջին հերթին հանրակրթության պարտականությունն է: Ընդ որում, այդ ուղղությամբ աշխատանքների մեծ բաժինն ընկնում է տարրական դպրոցի վրա, բայց կարդալու կարողությունը հմտություն է դառնում կրթության մնացած օղակներում իրականացվող աշխատանքի շնորհիվ: Այս աշխատանքի արդյունավետության բարձրացման և իրավիճակի վերահսկման նպատակով շահեկան են աշակերտների կարդալու կարողությունների զարգացման ընթացքի մշտադիտարկումները կրթության բոլոր օղակներում:

Բնականաբար, մշտադիտարկումների արդյունավետության համար պիտի մշակվեն կարդալու հմտության ընդհանուր չափորոշչային պահանջներ՝ հաշվի առնելով հանրակրթության առանձին օղակների առանձնահատկությունները: Կարևորում ենք միայն նշել, որ այդ պահանջների մեջ տարրական դպրոցում էականը կարդացածի իմաստի ըմբռնումն է, գլխավոր մտքի բացահայտումը, ենթատեքստի կռահումը, բառապաշարի հարստացումը և կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցանությունը, ոչ թե մեկ րոպեում աշակերտի կարդացած բառերի քանակը (կարդալու արագությունը): **Կարդալու արագությունը՝ որպես կարդալու բնութագրիչ(որակ) ձևավորվում է ինքնըստինքյան, երբ մնացած որակական հատկանիշներն անհրաժեշտ չափով զարգացած են:**

Կարդալու կարողության զարգացման մակարդակի մշտադիտարկումը պիտի իրականացվի հանրակրթության բոլոր օղակներում յուրաքանչյուր տարի, տարիքային բոլոր փուլերում, տվյալ դպրոցի բոլոր աշակերտների շրջանում՝ պահելով անվանական

տվյալները և յուրաքանչյուր տարի համեմատելով ու որոշելով աշակերտների կարդալու կարողության մակարդակների փոփոխությունը՝ դինամիկան՝ վերլուծելու և համապատասխան ծրագրեր ու մեթոդիկաներ մշակելու, բացահայտելու համար այն դժվարությունները, որոնք չեն հաղթահարվել:

**Թեմայի նպատակը:** Աշխատանքի հիմնական նպատակն է երեխաների մոտ կարդացածը հասկանալու կարողություններ ձևաորման հիմնախնդրի ուսումնասիրությունն է:

**Ուսումնասիրության խնդիրները:** Որպես խնդիրներ են դրվել՝

- կարդացածը հասկանալու կարողությունների ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրումը
- ներկայացնել կարդացածը հասկանալու կարողությունների դերը մաթեմատիկայի դասավանդման ընթացքում:

**Ուսումնասիրության օբյեկտը:** Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը մաթեմատիկայի դասավանդման ընթացքում երեխաների մոտ կարդացածը հասկանալու կարողությունները զարգացումն:

## 1. Կարդալու ուսուցման նշանակությունը

Կարդալու ուսուցումը տարրական դասընթացի ամենահիմնական նպատակներից մեկն է:

Մարդու քաղաքավարի լինելու առաջին չափանիշը նրա գրագետ լինելն է՝ տպագիր խոսքին տիրապետելու ունակությունը: Գիրքը գիտելիքների աղբյուրն է, մարդկային սերունդների ստեղծած բազմադարյան կուլտուրայի հարուստ գանձարաններից մեկը:

Կարդալու ուսուցման ընթացքում աստիճանաբար երեխայի մեջ սեր է պատվաստվում դեպի գիրքը՝ բոլոր գիտելիքների աղբյուրը:

Յուրաքանչյուր ընթերցանության դաս պետք է լինի կարդալու ուսուցման դաս: Դասարանում մշակելու համար առաջադրված տեքստերի ընթերցման զանազան ձևեր պետք է գործադրել, որպեսզի այդ աշխատանքը երեխաների համար հետաքրքրական, իսկ ուսուցման տեսակետից օգտակար և բազմաբովանդակ դառնա: Տարրական դասարաններում կարելի է գործադրել բարձրաձայն, լուռ, ընտրովի, խմբովին, դերերով կարդալու ընթերցումը: Տեքստի միևնույն տիպի ընթերցումը աշակերտների համար հետաքրքրական դարձնելու նկատառումով յուրաքանչյուր դեպքում դրան բոլորովին նոր բնույթ պետք է տալ, նոր առաջադրանքով անցկացնել, որպեսզի աշխատանքի մեջ բազմազանություն և թարմություն մտնի[1]:

Երեխաներին կարդալ սովորեցնելու հետ մեկտեղ պետք է ուսուցիչը աշխատի նրանց լեզվի մշակման, գեղարվեստական ստեղծագործության ճիշտ ըմբռնման, գրական արտասանության և ընդհանրապես խոսքի կուլտուրայի և մտածողության զարգացման ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի ավելի խոր ըմբռնել տալ կարդացածի հիմնական միտքը:

Տարրական դասարաններում ինչպես բացատրական ընթերցանության, այնպես էլ քերականական դասերին տարվող աշխատանքներից ամենահիմնականը եղել է և մնում

[1] Завадская Т. Ф. Методика выразительного чтения, М. 1987, с.- 18.

է կարդալու հմտությունների ճիշտ և բազմակողմանի զարգացումը, որի շնորհիվ երեխան հաղորդակից է դառնում լեզվի հարստությանն ու գեղեցկությանը:

## 2.Կարդալու ուսուցման հիմունքները

Մաթեմատիկայի դասավանդման ընթացքում կարդալու ուսուցման հիմքերը դրվում են գրաճանաչության ուսուցմանը զուգընթաց: Կարդալը ամենից առաջ տվյալ լեզվի հնչյունների հանրորեն ընդունված պայմանական նշանները՝ գրերը կամ տառերը ճանաչելու պրոցեսն է: կարդալու համար պետք է ճիշտ ճանաչել և իրարից տարբերել բոլոր տառերը՝ բոլոր տեսակի տառակապակցությունների մեջ, դա կարդալու առաջին աստիճանն է՝ կարդալու այս աստիճանը գերազանցապես տեսողական պրոցես է:

Տեսողական տպավորությունները պետք է վերածել ձայնական, հնչյունական տպավորությունների, որը արդեն երկրորդ աստիճանն է՝ **հնչյունա-շարժողական** պրոցեսը[2]:

Սակայն այդ առանձին-առանձին հնչյունները պետք է միավորել վանկերի, վանկերն էլ բառերի մեջ, այսինքն՝ տիրապետել հնչյուններն իրար հետ կապակցելու և ամբողջական բառերով կարդալու հմտությանը:

Կարդալու հմտության ձեռք բերումը կապված է երկարաձև և հետևողական վարժությունների, ինչպես նաև կարդալու ուսուցումը ճիշտ հիմքերի վրա դնելու հետ:

Սկզբնական շրջանում վանկերով կարդալը հնարավորություն է տալիս աստիճանաբար անցնելու բառերով և նախադասություններով կարդալուն: Այս պրոցեսը լիարժեք կդառնա այն ժամանակ, երբ կարդացողը կհասկանա իր կարդացածը, երբ, վերհիշելով ու պատկերացնելով այդ բառերի հետ կապված մտապատկերները, կզգա իր կարդացածը, կապրի դրանով:

Հենց տարրական դասարաններում պետք է սովորեցնել աշակերտներին հաղթահարել կարդալու պրոցեսի դժվարությունները: Կարդալը տարրական

[2] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 13:

դասարաններում բացառիկ կարևոր ու անփոխարինելի միջոց է երեխայի մտահորիզոնի լայնացման, լեզվի տիրապետման, բարոյական նորմաների պատվաստման համար:

Տարրական դասարաններում աշակերտը պետք է ձեռք բերի՝

1. ճիշտ, գիտակցորեն, հնարավորին չափ սահուն և արտահայտիչ կարդալու հմտություն,
2. բարձրաձայն ու լուռ կարդալու, ինքնուրույնորեն, իր տարիքին ու ըմբռնումներին համապատասխան տեքստեր ընթերցելու և հասկանալու հմտություն,
3. կարդացածը մասերի բաժանելու և վերնագրելու, կարդացած տեքստի պլանը կազմելու հմտություն:
4. կարդացածի բովանդակությունը վերարտադրելու հմտություն,
5. կարդացածի վերաբերյալ տրված հարցերին լրիվ պատասխան տալու հմտություն և այլն:

Աստիճանաբար աշակերտների մոտ պետք է մշակել լավ կարդալու հմտությունները, որոնք զարգացնելով՝ աստիճանաբար աշակերտը ձեռք կբերի արագ կարդալու հմտություն: Կարդալու ճշտությունը, սահունությունը հետագայում նախապայման են կարդալու արտահայտչականության համար:

## 3. Հասկանալով կամ գիտակցորեն կարդալ

Կարդալն ամենից առաջ պետք է գիտակցական լինի, որովհետև միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել լավ կարդալու մյուս բոլոր բաղադրիչները:

Գիտակցական է այն ընթերցանությունը, որի ժամանակ կարդացողը ճիշտ, լրիվ և պարզ կերպով է հասկանում իր կարդացածը, իսկ մեխանիկական է, եթե աշակերտը չի հասկանում՝

ա) տեքստում եղած բառերը,

բ) տեքստը կազմող նախադասությունները,

գ) առանձին նախադասությունների, պարբերությունների հատվածների միջև եղած կապերը,

դ) կարդացածի գլխավոր միտքը,

ե) տեքստի առանձին մասերի միջև եղած փոխհարաբերությունները[3]:

Մեր խնդիրն է գործադրել այնպիսի մեթոդական եղանակներ ու ձևեր, որ աշակերտը հասկանա վերը նշվածներից յուրաքանչյուրը:

Կարդալը գիտակցական դարձնելու համար մի շարք միջոցներ պետք է գործադրել, որպեսզի վերացվեն այն բոլոր խոչընդոտները, որոնք կբերեն անգիտակցական կամ մեխանիկական ընթերցանության:

1. **Զրույց:** Զրույցը ընթերցանության հիմնական բաղադրիչներից է, որը լինում է երեք տեսակ՝ ա) տեքստի ընթերցմանը նախորդող կամ ընթերցումը նախապատրաստող, բ) կարդալուն ուղեկցող կամ տեքստի վերլուծման հետ կապված և գ) ամփոփիչ կամ թեմայի ամփոփման հետ կապված զրույց:

Թե զրույցի որ տեսակը պետք է գործադրել, ուսուցիչն ինքն է որոշում՝ ելնելով ընթերցվելիք տեքստի բնույթից, դժվարություններից, աշակերտների պատրաստականությունից և այլն: Նախապատրաստական զրույցի նպատակը աշակերտներին օգնելն է տեքստը ճիշտ հասկանալու, վերարտադրելու: Ուսուցիչը պետք է ձգտի աշակերտների մեջ տվյալ նյութը լսելու, ընկալելու և ըմբռնելու համապատասխան տրամադրություն ստեղծել: Բոլոր այն տեքստերը, որոնք բովանդակության, լեզվի կամ կառուցվածքի տեսակետից բարդ են, և կարդալիս երեխաները կարող են դժվարանալ, պետք է նախապատրաստական զրույցի ընթացքում անհրաժեշտ բացատրությունների, մեկնությունների, զննական պարագաների ցուցադրման և այլ միջոցներով մատչելի դարձվեն աշակերտներին:

Նախապատրաստական զրույցը պետք է միայն մոտեցնի նյութին և ոչ թե սպառի նյութը, պետք է բաց անի այն դուռը, որտեղից երեխաները պետք է ներս մտնեն, որպեսզի տեքստը պատմելիս վերարտադրի իր ըմբռնածը, ընկալածը:

Զրույցի երկրորդ ձևը կարդալու պրոցեսին զուգընթաց կամ տեքստի վերլուծության ժամանակ անցկացվող զրույցն է, որի նպատակն է ուղղություն տալ աշակերտների մտքին, նրանց ներգրավել տեքստի վրա կատարվող տրամաբանական և լեզվական

[3] Գյուլամիրյան Ջ., Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, 'Նախաշավիղ', 2001, 1, էջ 22-26:

աշխատանքներում, օրինակ՝ տեքստը մասերի բաժանելը, պլան կազմելը, հերոսների բնութագրումը, հիմնական և երկրորդային մտքերի զանազանումը, որոնք օգնում են խորապես ծանոթանալ տեքստի բովանդակությանը:

Ընթերցանության դասերին ամենից ավելի հաճախ գործածվում է ամփոփիչ զրույցը, որի նպատակն է ամփոփել, թե ինչ է աշակերտը սովորել տվյալ տեքստից կամ թեմայից, արվում են հետևություններ, եզրակացություններ: Սրա համար ընտրված հարցերը պետք է շատ ընդհանրացվող լինեն, որպեսզի աշակերտը ստիպված լինի մտածել, պատասխանել, ոչ թե տեքստի նախադասություններով, այլ իր վերաբերմունքը ցույց տա, կատարել ընդհանրացումներ:

Զրույցը ոչ միայն մեծապես օգնում է աշակերտի կարդալը գիտակցական, նպատակային ու արդյունավետ դարձնելուն, այլև նպաստում է աշակերտի բանավոր խոսքի մշակմանը:

Զրույցը բացառիկ կարևոր տեղ ունի ընթերցանության դասին, օժանդակ միջոց է, սակայն նրա գլխավոր նպատակ չէ:

**2.Բառային աշխատանք:** Բառային աշխատանքը ևս ընթերցանության բաղադրիչներից է, բառերի բացատրությունը խիստ անհրաժեշտ է տվյալ տեքստի ճիշտ և խորը յուրացման համար:

Տարրական դասարանում բառի բացատրությունը հնարավորին չափ կոնկրետ ու զննական պետք է դարձնել: Կարելի է բացատրել նաև հոմանիշներով, նկարագրելով, ձևաբանական վերլուծությամբ, ընդհանուր հասկացության մասնավորումով կամ հակառակը և այլն:

**3. Պլան կազմել:** Սա տեքստի հետ տարվող աշխատանքներից մեկն է: Դրանով մենք աշակերտին ծանոթացնում ենք գրվածքի կառուցվածքին, հնարավորություն ենք տալիս հետևելու գործողության կամ դեպքերի զարգացման ընթացքին, գաղափար և երկրորդական մտքերի հարաբերության և կապի մասին, նպաստում ենք գիտակցաբար ընթերցելուն, բովանդակության բազմակողմանի ու խորը յուրացմանը:

Պլանի ամենապարզ ձևերից մեկը նկարներով պլանն է, երբ աշակերտին առաջարկվում է դասավորել դրանք այնպես, ինչպես զարգանում է գործողությունների հաջորդականությունը:

Անհամեմատ ստեղծագործական է նկարելով պլան կազմելը: Աշակերտները ուսուցչի օգնությամբ որոշում են, թե ինչպիսի նկարներով կարելի կլիներ վերարտադրել կարդացած տեքստի բովանդակությունը և նկարում են դրանք:

Հետագայում կարելի է աշակերտներին սովորեցնել այդ նկարների տակ գրել այնպիսի բառ, դարձվածք կամ նախադասություն, որը համառոտ, բայց դիպուկ կերպով կարտահայտի նկարի հիմնական բովանդակությունը:

Գրելով մեկ նախադասություն՝ մենք աշակերտներին կսովորեցնենք նաև կատարել բառային պլան, որը անհամեմատ ավելի բարդ է:

Սկզբնական շրջանում կարելի է կազմել ընդարձակ ձևով, որպեսզի աշակերտը մի քանի մանրամասնություններ ավելացնի և կարողանա հասնել նյութի լրիվ վերարտադրմանը: Հետագայում սովորեցնել այդ ընդարձակ պլանը համառոտել:

Պլանը կազմելը օգնում է աշակերտի մեջ գիտակցաբար կարդալու հմտության զարգացմանը, ապահովում է ուսումնասիրված կերպարների ու գաղափարների ամրապնդումը, սովորեցնում է տրամաբանել ամբողջական խոսք կազմել և այլն:

**4.Բովանդակության վերարտադրում:**

Կարդացածի պատմելը կամ բովանդակության վերարտադրումը նպաստում է կարդալու գիտակցականությանը: Պատմելով աշակերտը հաղորդակից է դառնում գրական խոսքին, իր խոսքի մեջ է մտցնում նոր սովորած բառերը, արտահայտությունները: Սա լինում է երկու տեսակ՝ մանրամասն և համառոտ:

Ստանալով ուսուցչի օգնությունը՝ աշակերտը փորձում է պատմել պլանով: Համառոտ վերարտադրումը անհամեմատ դժվար է, քանի որ աշակերտը պետք է առանձնացնի տեքստի գլխավոր և երկրորդական մասերը և կարողանա հաղորդել կարևորը: Այդ պատճառով սա կիրառելի է բարձր դասարաններում:

## 4.Ճիշտ կամ անսխալ կարդալ

Լավ կարդալու հիմնական կոմպոնենտներից մեկն էլ ճիշտ կամ անսխալ կարդալն է:

Ճիշտ կարդալ ասելով հիմնականում պետք է հասկանալ տեքստի բարձրաձայն, պարզ և հստակ ընթերցումը, որի ընթացքում՝ ա) ոչ մի տառ, վանկ կամ բառ բաց չի թողնվում, բառի մեջ առանձին տառերի ու վանկերի տեղերը չեն փոխվում, կամ դրանք չեն շփոթվում ուրիշ տառերի ու վանկերի հետ, բ) չի փոխվում բառի քերականական ձևը (գոյականի թիվը, բայի դեմքը, թիվը, ժամանակը), բառը տառային կազմելով նման այլ բառի հետ չի շփոթվում, գ) նախադասության մեջ առանձին բառեր բաց չեն թողնվում կամ նոր բառեր չեն ավելացվում, դ) բառի մեջ վանկերը, նախադասության մեջ բառերը ավելորդ չեն կրկնվում:

Տարրական դասարաններում ամենից շատ հանդիպող բնորոշ սխալները սրանք են լինում, ուստի դրանց վերացման ուղղությամբ է, որ պետք է հետևողական և մտածված աշխատանք տանել: Այս տարիքում կարդալիս աշակերտի թույլ տված սխալների դեմ պայքարելը պետք է սերտորեն կապված լինի աշակերտի մեջ լավ կարդալու հմտոթյունների մշակման աշխատանքների հետ, որպեսզի արդյունքը իսկապես դրական լինի:

Ճիշտ կարդալու հմտությունը երկարատև ու հետևողական աշխատանքի արդյունք է, աշակերտի մեջ այդ հմտության մշակմանը պետք է ձեռնամուխ լինել առաջին մի քանի տառերը սովորեցնելու օրվանից, երբ երեխան այդ տառերով արդեն բառեր է կազմում ու կարդում: Կարդալու հենց այդ վարժություններից երեխաներին սովորեցնենք կարդալ դանդաղ, պարզ ու հստակ՝ պահպանելով ֆրանսերենի արտասանության նորմաները: Հետագայում, իհարկե, դանդաղ կարդալն աստիճանաբար տեղի է տալիս սահուն կարդալուն՝ կապված վանկերով կարդալուց ամբողջական բառերով կարդալուն անցնելու հետ, որին հասնում են դասարանում և տանը բարձրաձայն կարդալու ամենօրյա երկարատև ու բազմաթիվ վարժությունների շնորհիվ:

## 5.Սահուն կամ վարժ կարդալ

Սահուն կամ վարժ կարդալը լավ կարդալու հիմնական առանձնահատկություններից մեկն է, և ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինի առաջին իսկ օրվանից: Վարժ կարդալ ասելով պետք է հասկանալ կարդալու այն նորմալ արագությունը, որի ժամանակ ապահովվում է նյութի լրիվ ըմբռնումը: Վարժ կարդալու ժամանակ կարդալու արագությունը պետք է մոտենա սովորական խոսակցության արագությանը՝ չհաշված արտահայտիչ կարդալու պահանջները բավարարելու նկատառումով առանձին հատվածները կարդալիս տեմպի արագացումն ու դանդաղեցումը, որը կարող է չմոտենալ սովորական խոսակցությանը:

Ուսուցչի գլխավոր հոգատարությունը ոչ թե կարդալու արագությունը, այլ ճշտությունը պետք է լինի, իսկ արագությունը կգա ինքնըստինքյան, որպես արդյունք կարդալու բազմաթիվ ու բազմապիսի վարժությունների:

Առանց սահուն կամ վարժ կարդալու հնարավոր չէ ապահովել կարդալու գիտակցությանն ու արտահայտչականությանը:

Վարժ կարդալու հմտության մշակման համար առաջարկվում են հետևյալ ձևերը.

1) Վարժ կարդալու հմտության մշակման տեսակետից կարևոր նշանակություն ունի լուռ կարդալով բարձրաձայն կարդալուն նախապատրաստելը: Կարդացվելիք տեքստի հետ աշակերտի այդ նախնական ծանոթությունը բարձրացնում է կարդալու տեմպը, հնարավորություն է տալիս աշակերտին կարդալիս ճիշտ ու արագ կողմնորոշվելու:
2) Ընկերոջ կարդալուն հետևելը ևս վարժեցնում է կարդալու մեջ, նպաստում է վարժ կարդալու հմտության մշակմանը:
3) Որպեսզի աշակերտի կարդալն իսկապես սահուն ու վարժ լինի, շատ օգտակար է կարդալուց առաջ տեքստի վերաբերյալ հարցերի առաջադրումը:
4) Դիալոգների ընթերցումը ևս շատ է օգնում վարժ կարդալու հմտության մշակմանը:
5) Ընտրովի ընթերցումը ևս նպաստում է վարժ կարդալու հմտության մշակմանը: Որոշակի առաջադրանք է հանձնարարվում տեքստի հետ և պահանջվում է տեքստում գտնել դրա պատասխանը: Տեքստի արագ, բայց խորապես

գիտակցված ընթերցումը շատ է նպաստում ինչպես գիտակցական, այնպես սահուն կարդալու հմտության զարգացմանը:

6) Սկզբնական շրջանում վարժ կարդալու հմտությունը նպաստում է արտագրությունը: Արատգրելիս ևս աշակերտը անդրադառնում է բառին՝ կարդում է, մտածում է դրա վրա:

Կարդալու բոլոր առանձնահատկություններն էլ պետք է զարգացնել միաժամանակ: Տարրական դասարաններում հիմնական աշխատանքը տարվում է գիտակցական կարդալու հմտությունների մշակման ուղղությամբ, իսկ միջին դասարաններում ուշադություն ենք դարձնում կարդալու արտահայտչականությանը և սահունությանը:

## 6.Արտահայտիչ կարդալ

Արտահայտչականությունը լավ կարդալու հիմնական առանձնահատ-կություններից մեկն է: Կարդալը արտահայտիչ է համարվում այն ժամանակ, երբ կարդացողը կարողանում է մտովին զգալ և իր ձայնի ելևէջներով, դադարներով ու փոփոխությամբ վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը գրել է իր տողերի մեջ:

Կարդալը արտահայտիչ է համարվում, եթե կարդացողը կարողանում է պահպանել կամ վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ:

Կարդալը արտահայտիչ է համարվում, եթե կարդացողը կարողանում է պահպանել կամ վերակենդանացնել ա) արտասանության ճշտությունը, հստակությունն ու բարձրությունը, բ) քերականական, տրամաբանական ու հոգեբանական շեշտերը, գ) քերականական, հոգեբանական ու տրամաբանական դադարները, դ) ճիշտ է ընտրում ինտոնացիան, է) կարդալու տեմպը:

Արտահայտիչ կարդալը աշակերտի մեջ զարգացնում է գեղեցիկ արտասանելու և խոսելու ունակություն, մշակում է նրա ձայնն ու լսողությունը, նպաստում է շնչառության կանոնավորմանը, ազնվացնում է աշակերտի զգացմունքներն ու գեղարվեստական

ճաշակը, նրա մեջ պատվաստվում է իր ձայնին ու շնչառությանը տիրապետելու կարողություն:

Արտահայտիչ կարդալու համար կարելի է գործադրել հետևյալ մեթոդները.

1. Ուսուցչի օրինակը
2. Նյութի բազմակողմանի մշակումը
3. Դասարանական վերլուծությունները (դիալոգներ)
4. Դերերով կարդալը
5. Խմբովին ընթերցանությունը:

Աշակերտները պետք է իմանան, որ նկարագրությունները, պատմությունները և հեքիաթները պետք է կարդալ դանդաղ, հանգիստ ու ցածր ձայնով, արագ զարգացող գործողությունները՝ արագ, բարձրաձայն, ուժեղ ձայնով, զայրույթը, հրամանը, կոչը, պահանջը, սպառնալիքը արտահայտվում են արագ տեմպով, բարձր և ուժեղ ձայնով,փաղաքշանքը, սերը, համոզելը, տխրությունը, դանդաղ տեմպով, ցածր ու թույլ ձայնով և այլն:

Արտահայտիչ կարդալու այսպիսի տարրական կանոնները կարող են նպաստել աշակերտների մեջ արտահայտիչ կարդալու հմտության մշակմանը:

## Եզրակացություն

Այսպիսով մեր՝ ուսուցիչներիս, ծրագրային պահանջներից ամենահիմնականը աշակերտի մեջ ճիշտ, գիտակցորեն, հնարավորին չափ սահուն ու արտահայտիչ կարդալու հմտության մշակումն է, որը հիմք է հանդիսանալու մյուս բոլոր հմտությունների մշակման ու զարգացման համար:

Ուսուցման ժամանակ պետք է առաջին դիրքում դնել ոչ թե գրության ու արտասանության տարբերությունն ու հակադրությունը, այլ կարդալու և խոսելու նույնության գիտակցումը, որը մի կողմից՝ կօգնի ճիշտ կարդալու, իսկ մյուս կողմից՝ կանոնավոր ու արտահայտիչ կարդալու հմտության մշակմանը: Ճիշտ կարդալը ճիշտ հասկանալու, կայուն յուրացման և լավ ըմբռնելու հիմնական նախապայմանն է, հետևաբար աշակերտի մեջ ճիշտ կամ անսխալ կարդալու հմտության մշակումը միշտ էլ մեր՝ ուսուցիչներիս, ուշադրության կենտրոնում է:

Արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում էլ պետք է դնել կարդացած տեքստի բովանդակության գիտակցումը: Ուսուցչի գլխավոր նպատակը պետք է լինի իր ընթերցանությամբ երեխաներին լիովին հասկանալի դարձնել տեքստը, պետք է կարդա այնպես, որ աշակերտները վերապրեն այն բոլոր հուզական պահերը, որոնք հեղինակը դրել է իր գրվածքի տողերում:

Աշակերտը պետք է լավ հասկանա տեքստի բովանդակությունը և ըստ այնմ էլ կարդա:

Արտահայտիչ կարդալու համար աշակերտը ոչ միայն պետք է իմանա, թե տեքստի որ մասը ինչպես պետք է կարդալ, այլև պետք է կարողանա ձայնի փոփոխությամբ, դադարներով ու ինտոնացիայի պահպանումով ճիշտ վերարտադրել այդ բովանդակությունը:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009.
2. Գյուլամիրյան Ջ., Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, ՝Նախաշավիղ՝, 2001, 1.
3. Դավթյան Մ., Ընթերցողական հմտությունների ձևավորումը դպրոցի հույժ կարևոր խնդիրներից է, ՝Մանկավարժություն՝, 2006, 3-4.
4. Թորոսյան Կ.,Խաչատրյան Հ., Սարգսյան Ս., Սարգսյան Ռ., Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա: Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր: ԿԱԻ, Եր., 2007.
5. ՀարությունյանՀ. Ս. ՉիբուխչյանՍ. Ա. «Մաթեմատիկայի իմ այբուբենը»Մաս 1,2 Երևան 2007
6. Մ. Ա. Բանտովա, Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա
7. Белошистая А. В. Занятия по развитию математических способностей детей 5-6 лет. В 2 кн. Кн 1. Конспекты занятей.-М.: Гуманитарн. Издательский центр Владос, 2004
8. Завадская Т. Ф. Методика выразительного чтения, М. 1987.